

Գլուխ III

Արդեն 1915թ. նոյեմբերի սկզբին ես յուրացրել էի Գ.-ի համակարգի որոշ հիմնարար սկզբունքներ, որոնք վերաբերում էին մարդուն: Առաջին սկզբունքը, որ նա շեշտադրում էր, մարդու մեջ *միասնության բացակայությունն* էր:

«Ամենամեծ սխալն այն է, որ կարծում են, թե մարդը միշտ նույն մարդն է: Մարդը երբեք երկար ժամանակ նույնը լինել չի կարող,- ասեց Գ.-ն: Նա շարունակ փոփոխվում է: Նա շատ հազվադեպ է միևնույն մարդը մնում, նույնիսկ կես ժամվա ընթացքում: Մենք կարծում ենք, որ եթե մարդու անունն է Իվան, ապա նա միշտ Իվան է: Ամեննին: Այժմ նա Իվանն է, հաջորդ պահին՝ Պետրոսը, մեկ րոպե անց՝ Նիկոլայը, Մերգելը, Մաթևոսը, Միմոնը: Իսկ դուք բոլորդ կարծում եք, թե նա Իվանն է: Դուք գիտեք, որ Իվանը չի կարող որոշ բաներ անել: Օրինակ՝ նա չի կարող ստել: Այնուհետև դուք իմանում եք, որ նա ստել է, և զարմանում, որ նման քայլի է դիմել: Եվ իսկապես՝ Իվանը չի կարող ստել, դա Նիկոլայն է ստել: Եվ հնարավորության դեպքում՝ Նիկոլայը *չի կարող չստել*: Դուք կապշեք, եթե իմանաք, թե մարդու մեջ որքան քանակությամբ Իվաններ և Նիկոլայներ են ապրում: Եթե կարողանայիք հետևել նրանց, ապա կհնոթաստրոն գնալու կարիք այլևս չէր լինի»:

«Մարդու մարմնի առաձին մասերի կամ օրգանների գիտակցության հետ դա որևէ կերպ կապված է արդյո՞ք, - այս պահին հարցրեցի ես: Ձեր արտահայտած այս միտքը ես հասկանում եմ և շատ հաճախ ինքս եմ զգում այդ գիտակցությունների առկայությունը: Ես գիտեմ, որ ոչ միայն առաձին օրգանները, այլ նաև մարմնի յուրաքանչյուր մաս, ունենալով իր ուրույն գործառնությունը, ունի նաև իր առանձին գիտակցությունը: Աջ ձեռքն ունի մի գիտակցություն, իսկ ձախը՝ մեկ այլ: Դուք դա նկատի ունե՞ք»:

«Այնքան էլ չէ, - ասեց Գ.-ն: Այս գիտակցություններն էլ գոյություն ունեն, բայց դրանք համեմատաբար անվնաս են: Նրանցից յուրաքանչյուրը գիտի իր տեղն ու դերը: Ձեռքերը գիտեն, որ պետք է աշխատեն, ոտքերը գիտեն, որ պետք է քայլեն: Սակայն այս Իվանները, Պետրոսները և Նիկոլայները տարբեր են: Նրանք բոլորն էլ իրենց կոչում են «Ես»: Նրանք իրենց համարում են տերն ու տիրակալը, և մեկը մյուսին չեն ցանկանում ճանաչել: Նրանցից յուրաքանչյուրն իրեն խալիֆ է զգում մեկ ժամով, անում այն ամենն, ինչ ցանկանում է: Ավելի ուշ մյուսները պիտի դրա դիմաց վճարեն: Նրանց միջև կարգ ու կանոն չկա: Նա, ով առաջ անցնի, կդառնա տերը: Ոչ մի բան հաշվի չառնելով՝ նա աջ ու ձախ մտրակում է բոլորին: Սակայն շուտով մյուսը խլում է նրանից մտրակը և սկսում ծեծկրտել վերջինիս: Եվ այսպես շարունակ՝ ողջ կյանքի ընթացքում: Պատկերացրեք մի երկիր, որտեղ բոլորը կարող են հինգ րոպե ժամանակով թագավոր դառնալ և այդ ընթացքում թագավորության հետ վարվել այնպես, ինչպես ցանկանան: Սա է մեր կյանքը»:

Զրույցներից մեկի ժամանակ Գ.-ն կրկին անդրադարձավ մարդու տարբեր մարմինների հասկացությանը:

-Այն, որ մարդն ունի մի քանի մարմին պետք է հասկացվի որպես գաղափար, որպես սկզբունք: Սակայն դա մեզ չի վերաբերում: Մենք գիտենք, որ ունենք մեկ ֆիզիկական մարմին և ուրիշ ոչինչ չգիտենք: Հետևաբար մենք պետք է ուսումնասիրենք ֆիզիկական մարմինը: Պետք է սակայն հիշենք, որ հարցը չի սահմանափակվում ֆիզիկական մարմնով, և կան մարդիկ, որ ունեն երկու, երեք կամ ավել մարմիններ: Սակայն մեզ վրա անձամբ, այսպես թե այնպես, դա որևէ կերպ չի անդրադառնում: Ինչ-որ մեկը՝ ինչպես Ամերիկայում Ռոքֆելլերը, կարող է հարյուրավոր միլիոններ ունենալ, սակայն նրա միլիոնները ինձ չեն օգնի, եթե ես ուտելու որևէ բան չունեմ: Դա միևնույն բանն է: Յուրաքանչյուրն իր մասին պիտի մտածի:

Անօգուտ և անիմաստ է ուրիշների վրա հույս դնելը կամ ուրիշների ունեցվածքի մասին մտքերով մխիթարվելը:

-Ինչպե՞ս կարելի է իմանալ արդյոք մարդն ունի «աստեղային մարմին», թե ոչ, - հարցրեցի ես:

-Դրա համար հատուկ ձևեր գոյություն ունեն,- պատասխանեց Գ.-ն:

Որոշ պայմաններում հնարավոր է տեսնել «աստեղային մարմինը» այն կարելի է անջատել ֆիզիկական մարմնից և նույնիսկ լուսանկարել ֆիզիկական մարմնի կողքին: «Աստեղային մարմնի» գոյությունը կարելի է ավելի հեշտությամբ սահմանել իր *գործառնությունների միջոցով*: «Աստեղային մարմինն» ունի հստակ գործառնություններ, որ ֆիզիկական մարմինը չի կարող ունենալ: Այս գործառնությունների առկայությունը խոսում է «աստեղային մարմնի» առկայության մասին: Տվյալ գործառնությունների բացակայությունը խոսում է «աստեղային մարմնի» բացակայության մասին: Սակայն այժմ այդ մասին խոսելը դեռևս շատ վաղ է: Մեր ողջ ուշադրությունն անհրաժեշտ է սևեռել ֆիզիկական մարմնի ուսումնասիրությանը: Անհրաժեշտ է հասկանալ մարդկային մեքենայի կառուցվածքը: Մեր գլխավոր սխալն այն է, որ մենք կարծում ենք, թե ունենք մեկ գիտակցություն: Մենք այդ գիտակցության գործառնությունը «գիտակից» ենք անվանում: Այն ամենն, ինչ չի ներառվում այս գիտակցության մեջ, մենք անվանում ենք «անգիտակցական» կամ «ենթագիտակցական»: Սա մեր հիմնական մոլորությունն է: Գիտակցականից և անգիտակցականից մենք ավելի ուշ կխոսենք: Այս պահին ես ցանկանում եմ ձեզ բացատրել, որ մարդկային մեքենայի, այսինքն՝ ֆիզիկական մարմնի, գործունեությունը առաջնորդվում է ոչ թե մեկ գիտակցությամբ, այլ մի քանի՝ իրարից անկախ գիտակցություններով, որոնք կատարում են առանձին գործառնություններ և ի հայտ են գալիս համապատասխան ոլորտներում: Առաջին հերթին՝ սա է պետք հասկանալ: Եթե սա չհասկանաք, ապա ոչինչ էլ չեք հասկանա:

Այնուհետև Գ.-ն բացատրեց մարդու բազմազան գործառնությունները և դրանք վերահսկող կենտրոնները այն հերթականությամբ, ինչպես դրանք շարադրված էին հոգեբանության դասախոսություններում:

Այս բացատրությունները և դրանց հետ կապված բոլոր գրույցները բավականին երկար ժամանակ խլեցին, մինչդեռ յուրաքանչյուր գրույցի ժամանակ մենք անդրադառնում էինք մարդու մեքենայացվածության, մարդու մեջ միասնության բացակայության, մարդու կողմից ընտրություն կատարելու հնարավորության բացակայության, նրա անկարողության և այլ հիմնարար սկզբունքներին: Որևէ կերպ հնարավոր չէ ներկայացնել բոլոր այս գրույցները այնպես, ինչպես դրանք ընթանում էին իրականում: Այդ պատճառով, բոլոր հոգեբանական և տիեզերական նյութերը հավաքելով, ես բաժանեցի դրանք երկու շարք առանձին դասախոսությունների շարքի:

Այս կապակցությամբ կցանկանայի նշել, որ մեզ հաղորդված մտքերը այնպես չեն տրվել, ինչպես ես շարադրել եմ իմ դասախոսություններում: Գ.-ն քիչ-քիչ էր հաղորդում մեզ իր մտքերը՝ կարծես դրանք պաշտպաներ կամ պատասպարեր մեզանից: Նոր թեմաներ շոշափելիս նա միայն ընդհանուր սկզբունքներն էր բացատրում՝ հաճախ թաքցնելով ամենակարևորը: Երբեմն նա ինքն էր մատնանշում իր կողմից տրված տեսություններում ակնհայտ հակասությունները, որոնք իրականում հենց այդ վերապահումների և ճնշումների հետևանք էին: Հաջորդ անգամ, միևնույն թեմային անդրադառնալիս նա ավելին էր տալիս և հնարավորության դեպքում՝ մեկ այլ տեսանկյունից էր ներկայացնում այդ ամենը: Երրորդ անգամ՝ ~~դեռ~~ ավելին: Օրինակ՝ խոսելով գործառնությունների և կենտրոնների խնդրից, առաջին գրույցի ժամանակ նա խոսեց *երեք կենտրոններից*՝ ինտելեկտուալ, զգացմունքային և շարժողական, փորձելով

ստիպել մեզ տարբերակել այս գործառնությունները, բերել օրինակներ և այլն: Այնուհետև նա դրան ավելացրեց ինքնուրույն և անկախ մեքենայի՝ բնագոյի կենտրոնը, իսկ ավելի ուշ՝ սեռական կենտրոնը: Հիշում եմ, թե ինչպես նրա նկատառումներից մի քանիսը գրավեցին իմ ուշադրությունը: Օրինակ՝ երբ խոսում էր սեռական կենտրոնից, նա ասեց, որ այն գրեթե երբևիցե անկախ չի գործում, քանի որ միշտ կախման մեջ է գտնվում այլ կենտրոններից՝ ինտելեկտուալ, զգացմունքային, բնագոյային և շարժողական: Այնուհետև կենտրոնների էներգետիկայից խոսելիս Գ.-ն հաճախ էր անդրադառնում, ինչպես նա էր ասում, կենտրոնների սխալ աշխատանքին և տվյալ աշխատանքում սեռական կենտրոնի նշանակությանը: Նա շատ էր խոսում այն մասին, թե ինչպես են բոլոր կենտրոնները խլում սեռական կենտրոնի ողջ էներգիան և լի անիմաստ ոգևորվածությամբ՝ սխալ կիրառում այն. փոխարենը սեռական կենտրոնին է փոխանցվում անօգուտ և անկիրառելի էներգիա:

Ես հիշում եմ նրա խոսքերը.

«Շատ մեծ իրադարձություն է, երբ սեռական կենտրոնը սկսում է աշխատել իր իսկ էներգիայով, քանի որ դա շատ հազվադեպ է տեղի ունենում»:

Հիշում եմ ևս մեկ դիտողություն, որն ավելի ուշ սխալ մեկնաբանությունների և հետևությունների համար հիմք հանդիսացավ: Դրանք վերաբերում են ներքևի հատվածում գտնվող երեք կենտրոններին՝ բնագոյային, շարժողական և սեռական, որոնք մեկը մյուսի հետ հարաբերակցվում են *երեք ուժերի* միջոցով. սեռական կենտրոնը, սովորաբար, գործում է որպես մեկուսացնող ուժ բնագոյային և շարժողական կենտրոնների նկատմամբ, որոնք հանդիսանում են որպես ակտիվ և պասիվ ուժեր:

Գ.-ի մեկնաբանման մեթոդը, որի մասին ես նշեցի, և սկզբնական գրույցների ժամանակ նրա քողարկված խոսքը թյուրիմասությունների

տեղիք տվեցին՝ հատկապես ավելի ուշ ձևավորված խմբերում, որոնք իմ աշխատանքի հետ կապ չունեին:

p.56

Շատերը հակասություններ էին տեսնում տվյալ գաղափարի առաջին նկարագրության և հետագա բացատրությունների միջև, և երբեմն, փորձելով հնարավորինս հավատարիմ մնալ սկզբնական բացատրությանը, նրանք անհավատալի տեսություններ էին մոգոնում, որոնք, իրականում, որևէ կապ չունեին Գ.-ի ասածների հետ: Այսպիսով, *երեք կենտրոնների* գաղափարը պահպանվեց որոշ խմբերի կողմից (որոնք, կրկնում եմ, ինձ հետ որևէ կապ չունեին): Եվ այս գաղափարը ինչ-որ ձևով շաղկապվեց *երեք ուժերի* գաղափարին. իրականում դրանք որևէ կերպ կապված չեն միմյանց հետ, քանի որ առաջին հերթին՝ հասարակ մարդն ունի ոչ թե երեք, այլ հինգ կենտրոն:

Տարբեր դասերի, մասշտաբների և նշանակության այս երկու գաղափարների համադրումը հետագա թյուրիմացությունների տեղիք տվեց և ամբողջովին խեղաթյուրեց ողջ համակարգը նրանց համար, ովքեր այս կերպ էին մտածում:

Հնարավոր է, որ երեք կենտրոնների (ինտելեկտուալ, զգացմունքային և շարժողական) գաղափարը, որ, ըստ նրանց, երեք ուժերի արտացոլումն էր, առաջացել էր ստորին կենտրոնների միջև եղած հարաբերությունների վերաբերյալ Գ.-ի կողմից բազմաթիվ անգամ արված սխալ դիտողությունների և սխալ ընկալումների հետևանքով:

Կենտրոնների վերաբերյալ հետագա զրույցների ժամանակ Գ.-ն գրեթե ամեն անգամ ինչ-որ նոր բան էր ավելացնում: Ինչպես արդեն ասեցի, նա սկզբում խոսում էր երեք կենտրոններից, այնուհետև՝ չորս, ավելի ուշ՝ հինգ, իսկ հետագայում՝ յոթ:

Այս զրույցներում հազիվ թե ընդգրկված լինեին կենտրոնների մասերի վերաբերյալ մանրամասնությունները: Գ.-ն ասում էր, որ այս

կենտրոնները բաժանված են դրական և բացասական մասերի, սակայն նա չէր նշում, որ այս տարանջատումը տարբեր կենտրոնների համար *նույնական չէ*: Նա նաև ասում էր, որ յուրաքանչյուր կենտրոն բաժանվում է երեք մասերի կամ *երեք հատվածների*, որոնք իրենց հերթին ևս բաժանվում են երեքի: Սակայն նա որևէ օրինակներ չէր բերում, ոչ էլ նշում էր, որ ուշադիր ուսումնասիրության դեպքում հնարավոր կլիներ տարբերակել կենտրոնների մասերի կատարած աշխատանքը:

Այս ամենը և շատ ավելին որոշ ժամանակ անց բացահայտվեց: Օրինակ, չնայած նա հիմք դրեց բացասական զգացմունքների դերի և նշանակության ուսումնասիրությանը, ինչպես նաև ներկայացրեց դրանց դեմ պայքարելու մեթոդները, նշելով նույնացումից հրաժարումը, կասկածամտությունը և բացասական զգացմունքների արտահայտումը, այնուամենայնիվ այս տեսությունները ավարտին չհասցրեց նա, ոչ էլ մերժեց բացասական զգացմունքների *անհրաժեշտությունը* և այն, որ դրանց համար գոյություն ունի նորմալ կենտրոն:

Ես այսուհետև կվերարտադրեմ պետերբուրգյան և հետագա խմբերի հետ զրույցներն ու դասախոսությունները, որքան որ հիշում եմ, և կփորձեմ խուսափել կրկնելուց այն, ինչ արդեն ասվել է դասախոսությունների առաջին և երկրորդ շարքերում: Սակայն որոշ դեպքերում դժվար է խուսափել կրկնություններից, և համակարգին վերաբերող Գ.-ի կողմից ներկայացված ընդհանուր գաղափարները, իմ կարծիքով, մեծ հետաքրքրություն կարող են առաջացնել:

Ինչ-որ մեկը հարցրեց հանդիպման ժամանակ.

- Ինչպե՞ս է պետք հասկանալ էվոլյուցիան:

- Մարդու էվոլյուցիան, - պատասխանեց Գ.-ն, - նրա մոտ այն կարողությունների և հնարավորությունների զարգացումն է, որ երբևիցե ինքնուրույն կամ մեխանիկորեն չեն զարգանում: Միայն նման զարգացումն

է, միայն նման աճն է բնորոշում մարդու իսկական էվոյուցիան: Չկա և չի էլ կարող լինել այլ տեսակի էվոյուցիա:

p.57

Ահա մարդն իր զարգացման ներկայիս փուլում: Բնությունը ստեղծել է նրան այնպես, ինչպիսին որ կա՝ մեծ քանակությամբ, և ինչպես տեսնում ենք, այսպիսին էլ կմնա: Փոփոխությունները, որ կարող են խախտել բնության ընդհանուր պահանջները, կարող են տեղի ունենալ առանձին միավորներում: Մարդու էվոյուցիայի օրինաչափությունը հասկանալու համար պետք է հասկանալ, որ կա որոշակի մի կետ, որից այն կողմ մարդու զարգացումը բոլորովին անհրաժեշտ չէ. այսինքն՝ բնությանն իր զարգացման տվյալ փուլում դա անհրաժեշտ չէ: Ավելի ստույգ՝ մարդկային տեսակի էվոյուցիան համապատասխանում է մոլորակների էվոյուցիային, բայց մոլորակների էվոյուցիան ընթանում է մեզ համար անվերջ, հարատև ժամանակահատվածում: Այն ժամանակահատվածում, որ մարդկային միտքը ընդունակ է ընկալելու, մոլորակների կյանքում որևիցե էական փոփոխություններ տեղի չեն կարող ունենալ, և հետևաբար որևէ էական փոփոխություններ մարդկության կյանքում տեղի չեն կարող ունենալ:

Մարդկությունը ոչ առաջ է ընթանում, ոչ էլ զարգանում է: Այն, ինչ մեր կարծիքով առաջընթաց է կամ էվոյուցիա, իրականում մասնակի ձևափոխում է: Նույնիսկ այս դեպքում հակառակ ուղղությամբ ընթացող համապատասխան փոփոխությունները անմիջապես հավասարակշռություն են հաստատվում: Մարդկությունը, ինչպես ցանկացած այլ օրգանական կյանք, Երկրի վրա պահպանում է իր գոյությունը Երկիր մոլորակի կարիքները և նպատակները հոգալու համար: Եվ ներկայումս դա հենց այնպիսին է, ինչպիսին որ պետք է լինի և համապատասխանում է Երկիր մոլորակի պահանջներին:

Միայն ժամանակակից եվրոպական միտքը՝ այդչափ տեսական և իրականությունից հեռու, կարող էր դիտարկել մարդու էվոլյուցիան իրեն *շրջապատող բնությունից անկախ և համարել այն բնության դեմ աստիճանական հաղթանակ*: Մա անհնարին է: Ապրելով, մահանալով, զարգանալով, ապաստելով՝ մարդը հավասարապես ծառայում է բնության նպատակին, կամ, ավելի շուտ, բնությունն է տարբեր նպատակներով հավասարապես օգտվում զարգացման և ապաստման հնարավորություններից: Մինևույն ժամանակ, մարդկությունը որպես մեկ ամբողջություն, չի կարող փախչել բնությունից, քանզի, նույնիսկ պայքարելով բնության դեմ, մարդը նրա ծրագրին չի հակադրվում: Մարդկության մեծ զանգվածների էվոլյուցիան հակասում է բնության նպատակներին: Մարդկանց փոքր տոկոսայնության զարգացումը հնարավոր է համահունչ լինի բնության նպատակներին: Մարդու ներսում կա էվոլյուցիայի հնարավորություն: Սակայն Երկիրը կամ ընդհանրապես մոլորակների աշխարհը ողջ մարդկության էվոլյուցիայի կարիքը չունի. այսինքն՝ բոլոր մարդկանց մոտ կամ նրանցից շատերի մոտ, կամ նույնիսկ մեծամասնության մոտ տվյալ հնարավորությունների զարգացման կարիք չկա: Իրականում այն նույնիսկ կարող է վնասակար կամ ճակատագրական լինել մոլորակների համար: Այդ պատճառով գոյություն ունեն հատուկ ուժեր (մոլորակային բնութի), որոնք հակադրվում են մարդկային զանգվածների էվոլյուցիային և պահում նրանց այն մակարդակի վրա, որտեղ որ պետք է լինեն:

Օրինակ՝ մարդկության էվոլյուցիան որոշ կետից այն կողմ կամ, ավելի ստույգ՝ որոշակի տոկոսային հարաբերությունից այն կողմ, ճակատագրական կարող էր լինել *լուսնի* համար: Ներկայումս լուսինը *սնվում է* օրգանական կյանքով և մարդկությամբ: Մարդկությունը օրգանական կայնքի մի մասն է կազմում: Իսկ դա նշանակում է, որ մարդկությունը *սնունդ* է լուսնի համար: Եթե բոլոր մարդիկ շատ խելացի լինեին, նրանք չէին ցանկանա լուսնի սնունդ դառնալ:

Սակայն միևնույն ժամանակ գոյություն ունեն էվոյուցիայի հնարավորություններ, և առանձին անհատները համապատասխան գիտելիքների և մեթոդների շնորհիվ կարող են զարգացնել դրանք: Նման զարգացման դեպքում տվյալ մարդու շահերն ընդդիմանում են մոլորակների շահերին և ուժերին: Մարդը պետք է հասկանա, որ իր էվոյուցիան միայն իրեն է անհրաժեշտ: Որևէ մեկը բացի իրենից հետաքրքրված չէ դրանով: Եվ որևէ մեկը պարտավոր չէ կամ մտադիր չէ օժանդակել նրան: Ընդհակառակը՝ այն ուժերը, որ դիմակայում են մարդկության մեծաքանակ զանգվածների էվոյուցիային, դիմակայում են նաև առանձին անհատներին: Մարդը պետք է սրամտությամբ գերազանցի նրանց: Մեկ մարդը կարող է սրամտությամբ գերազանցել նրանց, մարդկությունը՝ *չի կարող*: Դուք ավելի ուշ կհասկանաք, որ բոլոր այս խոչընդոտներն օգտակար են մարդու համար: Եթե նրանք գոյություն չունենային, ապա անհրաժեշտություն կառաջանար դիտավորյալ կերպով ստեղծել դրանք, քանի որ միայն խոչընդոտները հաղթահարելով մարդը կարող է իրեն անհրաժեշտ հատկանիշները ձեռք բերել:

Ահա և մարդկային էվոյուցիային վերաբերող ճշգրիտ տեսանկյունը: Էվոյուցիան պարտադիր և մեխանիկական չի կարող լինել: Էվոյուցիան գիտակից պայքարի արդյունքն է: Բնությունը այդ էվոյուցիայի կարիքը չունի, բնությունը չի ցանկանում դա և պայքար է մղում դրա դեմ: Էվոյուցիան անհրաժեշտ է միայն մարդուն և այն ժամանակ, երբ նա գիտակցում է իր կարգավիճակը, գիտակցում է այդ կարգավիճակը փոխելու հնարավորությունը, գիտակցում է, որ ունի կարողություններ, որոնցից չի օգտվում, հարստություն, որ նա չի տեսնում: Եվ այդ կարողություններին և հարստություններին տիրաբանալու տեսանկյունից էվոյուցիան հնարավոր է դառնում: Բայց, եթե *բոլոր* մարդիկ, կամ մարդկանց մեծամասնությունը գիտակցեր դա և ցանկանար ձեռք բերել այն, ինչն ի ծնե նրան է պատկանում, էվոյուցիան կրկին անհնարին կդառնար: Այն ինչը հնարավոր է առանձին անհատի համար, հնարավոր չէ զանգվածների համար:

Առանձին անհատի առավելությունն այն է, որ նա շատ փոքր է, և բնության տնտեսության մեջ մեկ մեքենայի ավել կամ պակաս լինելը էական չէ: Մենք կարող ենք հեշտությամբ հասկանալ այս մեծությունների հարաբերակցությունը, եթե պատկերացնենք միկրոսկոպիկ բջջի և մեր մարմնի միջև գոյություն ունեցող հարաբերակցությունը: Մեկ բջջի առկայությունը կամ բացակայությունը օրգանիզմում որևէ բան չի փոխի: Մենք չենք կարող գիտակցել դա, և այն չի կարող ազդել օրգանիզմի կենսունակության և գործառնությունների վրա: Նույնկերպ առանձին անհատը շատ փոքր է, որպեսզի ազդի տիեզերական մարմնի կյանքի վրա, որտեղ նա այնպիսի հարաբերակցության մեջ է գտնվում (չափի տեսանկյունից), ինչպես բջիջը մեր օրգանիզմի նկատմամբ: Եվ սա հենց այն է, ինչ հնարավոր է դարձնում նրա «Էվոյուցիան». դրանով են պայմանավորված նրա «հնարավորությունները»:

Էվոյուցիայից խոսելիս ի սկզբանե անհրաժեշտ է հասկանալ, որ որևէ մեխանիկական էվոյուցիա հնարավոր չէ: Մարդու էվոյուցիան իր գիտակցության էվոյուցիան է: *Իսկ գիտակցությունը «անգիտակցաբար» չի կարող զարգանալ:* Մարդու էվոյուցիան իր կամքի էվոյուցիան է, իսկ «կամքը» չի կարող զարգանալ ակամա: Մարդու էվոյուցիան իր որևէ բան անելու ունակության էվոյուցիան է, իսկ որևէ բան «անել»-ը չի կարող լինել այն ամենի արդյունքը, ինչ պարզապես «տեղի է ունենում»:

Մարդիկ չգիտեն, թե ինչ է մարդը: Նրանք գործ ունեն շատ խրթին մեքենայի հետ, շատ ավելի խրթին, քան գնացքի շարժիչն է, ավտոմեքենան կամ ինքնաթիռը. սակայն նրանք ոչինչ չգիտեն կամ գրեթե ոչինչ չգիտեն այս մեքենայի կառուցվածքի, աշխատանքի կամ հնարավորությունների մասին: Նրանք նույնիսկ չեն հասկանում նրա ամենահասարակ գործառույթները, քանի որ չգիտեն այդ գործառույթների նպատակը: Նրանք աղոտ կերպով են պատկերացնում, որ մարդը պետք է սովորի վարել իր մեքենան այնպես, ինչպես նա պետք է սովորի վարել գնացքը, ավտոմեքենան կամ ինքնաթիռը, և որ մարդկային մեքենայի հետ անհմուտ վարմունքը այնքան վտանգավոր

կարող է լինել, որքան անհմուտ վարմունքը ցանկացած այլ բարդ մեքենայի հետ: Բոլորը հասկանում են դա, եթե խոսքը վերաբերում է ինքնաթիռին, ավտոմեքենային կամ գնացքին: Սակայն շատ հազվադեպ է պատահում, երբ այս ամենը հաշվի է առնվում, երբ խոսքը գնում է մարդու մասին ընդհանրապես կամ կոնկրետ մարդու մասին, մասնավորապես: Ճիշտ և օրինական է համարվում այն ենթադրությունը, թե բնությունը մարդուն պարզևեղ է իր մեքենայի մասին անհրաժեշտ գիտելիքները: Մարդիկ հասկանում են, որ մեքենայի վերաբերյալ բնագոյային գիտելիքները որևէ կերպ բավարար չեն: Ինչու՞ են նրանք ուսումնասիրում բժշկությունը և օգտվում դրա ծառայություններից: Քանի որ գիտակցում են, որ լավ չեն ճանաչում իրենց մեքենան: Բայց նրանք չեն էլ կասկածում, որ ավելի շատ բան կարելի է բացահայտել իրենց մեքենայի մասին, քան դա կարող է անել գիտությունը: Նրանք չեն գիտակցում, որ այդ ժամանակ հնարավոր կլինի միանգամայն այլ բնույթի աշխատանք ակնկալել այդ մեքենայից»:

Շատ հաճախ գրեթե յուրաքանչյուր զրույցի ժամանակ, Գ.-ն անդրադառնում էր մարդու մոտ միասնության բացակայության գաղափարին:

«Մարդու ամենագլխավոր սխալներից մեկը, որ պետք է հիշել, - ասեց Գ.-ն,- իր Ես-ին վերաբերող պատրանքն է: Մարդն այնպիսին, ինչպիսին մենք ենք նրան ճանաչում՝ «մարդ-մեքենան», որը չի կարող «անել», ում հետ և ում միջոցով ամեն բան «պատահում է», չի կարող տիրապետել մշտական և եզակի Ես-ի: Նրա Ես-ը փոփոխվում է այն արագությամբ, որ արագությամբ որ փոփոխվում են նրա մտքերը, զգացմունքները, տրամադրությունը, և նա մեծ սխալ է գործում՝ կարծելով, թե նա միևնույն մարդն է. իրականում նա *ամեն անգամ ուրիշ մարդ է*, նա այն նույն մարդը չէ, ինչ մի պահ առաջ էր:

Մարդը չունի մշտական և անփոփոխ Ես: Ցանկացած միտք, ցանկացած տրամադրություն, ցանկացած իղձ, ցանկացած զգացողություն

ասում է «Ես»: Եվ յուրաքանչյուր դեպքում ընդունված է համարել, որ այդ Ես-ը պատկանում է մեկ *Ամբողջականության*, մեկ ամբողջական մարդու, և այն, որ Ամբողջականությունն է արտահայտում միտքը, կամքը կամ հակակրանքը: Իրականում այս ենթադրությունը որևէ հիմնավորում չունի: Մարդու յուրաքանչյուր միտք և իդձ առաջանում և ապրում է Ամբողջությունից զատ և անկախ: Իսկ Ամբողջությունը երբևիցե չի արտահայտվում այն պարզ պատճառով, որ ֆիզիկապես գոյություն ունի ~~այն~~ որպես այդպիսին, կամ էլ, որ վերացական որպես գաղափար Մարդը չունի որևէ անհատական Ես: Փոխարենը կան հարյուրավոր, հազարավոր առանձին փոքրիկ Ես-եր, որոնք մեկը մյուսի հետ ծանոթ չեն, երբևիցե միմյանց հետ կապի մեջ չեն մտնում և դեռ ավելին՝ թշնամացած են մեկը մյուսի նկատմամբ, մեկը մյուսին բացառում են և միմյանց հետ անհամատեղելի են: Ամեն բոպե, ամեն վայրկյան մարդն ասում կամ մտածում է՝ «Ես»: Եվ ամեն անգամ նրա Ես-ը տարբեր է: Հենց նոր դա միտքն էր, այժմ իդձ, հիմա զգացողություն, իսկ այժմ մեկ այլ միտք և այդպես շարունակ: *Մարդը հոգնակիություն է*: Նրա անունն է լեգեն:

Ես-երի հարափոփոխությունը, նրանց մշտական պայքարը հանուն գերիշխանության պայամանավորված են պատահական արտաքին ազդեցություններով: Տաքությունը, արևի շողերը, լավ եղանակը անմիջապես առաջ են բերում մի խումբ Ես-երի: Ցուրտը, մառախուղը, անձրևը առաջ են բերում մեկ այլ խումբ Ես-երի, այլ գուգորություններ, այլ զգացմունքներ, այլ գործողություններ: Մարդու մեջ չկա որևէ բան, որ կարողանար վերահսկել Ես-երի փոփոխությունը, և դրա հիմնական պատճառն այն է, որ մարդը չի նկատում կամ չգիտի այդ մասին: Նա միշտ ապրում է վերջին Ես-ում: Որոշ Ես-եր ավելի ուժեղ են, քան մյուսները: Բայց դա նրանց գիտակից ուժը չի. նրանց ստեղծել է պատահականությունների կամ արտաքին մեխանիկական ազդակների ուժը: Կրթությունը, ընդօրինակումը, ընթերցանությունը, կրոնի հիպոստական ազդեցությունը, կաստաները, ավանդույթները կամ նոր լոգունգների շքեղությունը մարդու

անհատականության մեջ շատ ուժեղ Ես-եր են ստեղծում, որոնք կառավարում են մի շարք ավելի թույլ Ես-երի: Նրանց ուժը կենտրոնում պատվող «գլանների» ուժն է: Եվ բոլոր Ես-երը, որոնցից կազմված է մարդու անհատականությունը, ինչպես և այս «գլանները», ունեն նույն ծագումը. դրանք արտաքին ազդեցությունների արդյունք են, երկուսն էլ շարժման մեջ են դրվում և կառավարվում են նոր արտաքին ազդեցությունների կողմից:

Մարդն անհատականություն չունի: Նա չունի եզակի հզոր Ես: Մարդը բաղկացած է բազմաթիվ փոքրիկ Ես-երից:

Յուրաքանչյուր առանձին փոքրիկ Ես հանդես է գալիս և գործում է Ամբողջության անունից՝ համաձայնելով, չհամաձայնելով, խոստումներ տալով, որոշումներ կայացնելով, որի համար մեկ այլ Ես կամ Ամբողջություն պետք է հետագայում պատասխան տա: Սա բացատրում է այն, թե ինչու են մարդիկ այդքան հաճախ որոշումներ կայացնում և ինչու են այդքան հազվադեպ իրականացնում դրանք: Մարդը որոշում է հաջորդ օրվանից ևեթ առավոտ շուտ արթնանալ: Այս որոշումը կայացնում է Ես-երից մեկը կամ դրանց մի խումբ: Սակայն արթնանալը մեկ այլ Ես-ի խնդիրն է, որը ոչ մի կերպ համաձայն չէ որոշման հետ կամ նույնիսկ որևէ բան չգիտի այդ որոշման մասին: Իհարկե մարդն առավոտյան կշարունակի քնել, իսկ երեկոյան նա կրկին կորոշի շուտ արթնանալ: Որոշ դեպքերում սա կարող է մարդու համար տհաճ հետևանքներ ունենալ: Մի փոքրիկ պատահական Ես կարող է որոշակի պահի մեկ ուրիշին խոստում տալ՝ պարզապես հանուն սնապարծության կամ զվարճանքի: Այնուհետև այն անհետանում է, իսկ մարդը, ով այլ Ես-երի մի ողջ համադրություն է, որոնք անմեղ են այդ հարցում, ստիպված կլինեն ողջ կյանքում վճարել դրա համար: Հենց դա է մարդու ողբերգությունը, այն, որ ցանկացած փոքր Ես կտրոններ ստորագրելու և պարտատոմսեր դուրս գրելու իրավունք ունի, իսկ մարդն, այսինքն՝ Ամբողջությունը, պետք է վճարի դրա դիմաց: Մարդկանց ողջ կյանքը շատ հաճախ կայանում է փոքր պատահական Ես-երի պարտքը վճարելու մեջ:

Արևելյան ուսմունքներում կան մի շարք փոխաբերական իմաստ պարունակող նկարներ, որոնց նպատակն է մարդու հատկությունը

P.61

պատկերել հենց այս տեսանկյունից: Այսպիսով, ուսմունքներից մեկում մարդը համեմատվում է տան հետ, որտեղ կա ծառաների բազմություն, բայց որը չունի տեր կամ կառավարիչ: Բոլոր ծառաները մոռացել են իրենց պարտականությունները, նրանցից որևէ մեկը չի ցանկանում անել այն, ինչ պարտավոր է անել, նրանցից յուրաքանչյուրը ցանկանում է տան տերը դառնալ՝ նույնիսկ մի փոքր ժամանակահատվածով: Նման անկարգությունը մեծ վտանգի տակ է դնում տունը: Միակ փրկությունը կլինի այն, եթե իսլամիստ ծառաների մի խումբ հանդիպի և *ժամանակավոր կառավարչի* ընտրի, այսինքն՝ փոխ-կառավարչի: Այս փոխ-կառավարիչը կարող է մյուս ծառաներին իրենց տեղը ցույց տալ՝ ստիպելով նրանց կատարել իրենց իսկ աշխատանքը: Խոհարարը կհայտնվի խոհանոցում, կառապանը՝ ախոռում, այգեգործը՝ այգում, և այլն: Այս կերպ «տունը» պատրաստ կլինի գլխավոր կառավարչի ժամանմանը. կառավարիչն իր հերթին կնախապատրաստի տունը տան տիրոջ ժամանմանը:

Մարդու համեմատությունը տան հետ, որտեղ սպասում են տիրոջ ժամանմանը, հաճախ հանդիպում է արևելյան ուսմունքներում, որոնք պահպանում են հինավուրց գիտելիքները. ինչպես գիտենք, այս թեման տարբեր ձևերով հանդես է գալիս նաև Ավետարանի առակներում:

Սակայն որքան էլ պարզ լինեն մարդու պատկերացումները իր ունակությունների մասին, դրանց իրականացումը հնարավոր չի դառնա: Այս հնարավորությունները գիտակցելու համար նա պետք է ազատագրման մեծ ցանկություն ունենա և պատրաստ լինի այս ազատագրման համար ամեն ինչ զոհաբերել»:

Պետերբուրգյան դասախոսությունների ժամանակաշրջանի հետ են կապված երկու հետաքրքիր գրույցներ:

Մի անգամ ես Գ.-ին մի լուսանկար ցույց տվեցի, որ նկարել էի Բենարեսում. նկարում պատկերված էր «մեխերի վրա մի ֆաքիր»:

Այս ֆաքիրը հասարակ ինելացի ձեռնածու չէր, որոնց ես տեսել էի Ցեյլոնում, չնայաց նա անկասկած «արհեստավարժ» էր: Ինձ տեղեկացրել էին, որ Գանգեսի ափին գտնվող Աուրանգգեր մզկիթի սրահում մի ֆաքիր կա՝ պառկած երկաթե մեխերով պատված մահճակալի վրա: Սա շատ առեղծվածային և սարսափազդու թվաց ինձ: Սակայն երբ ես ժամանեցի այնտեղ, միայն երկաթե մեխերով մահճակալը տեսա՝ առանց ֆաքիրի: Ինձ ասացին, որ ֆաքիրը գնացել է կովի ետևից: Երկրորդ անգամ, երբ գնացի, ֆաքիրն արդեն այնտեղ էր: Նա մահճակալին պառկած չէր, և որքանով հասկացա, պառկում էր միայն այն ժամանակ, երբ գալիս էին դիտորդները: Բայց երբ վճարեցի նրան մեկ բուլայի, ինձ ցույց տվեց բոլոր իր հմտությունները: Նա գրեթե ամբողջովին մերկ պառկել էր մահճակալին, որը պատված էր երկար և բավականին սուր երկաթյա մեխերով: Զգուշանալով կտրուկ շարժումներից՝ նա շուտ եկավ մեխերի վրա, պառկեց մեջքի, կողերի, ստամոքսի վրա, և, իհարկե, մեխերը ոչ ծակեցին, ոչ էլ քերծեցին նրան: Ես լուսանկարեցի նրան երկու անգամ, բայց չկարողացա այս երևույթի բացատրությունը գտնել: Ֆաքիրը ոչ ինտելիգենտ, ոչ էլ հավատացյալ մարդու տպավորություն չէր գործում: Նրա դեմքը բթություն, ձանձրույթ և անտարբերություն էր արտահայտում. ինքնագոհաբերության կամ մարտիրոսության որևէ ձգտում չէր նշմարվում:

Այս ամենը ես պատմեցի Գ.-ին՝ ցույց տալով նրան լուսանկարը. այնուհետև ես հարցրեցի նրան, թե ինչ կարծիքի է:

«Դժվար է խոսքերով բացատրել դա, - պատասխանեց Գ.-ն: Առաջին հերթին, այդ մարդը «ֆաքիր» չէ այն իմաստով, որով ես էի օգտագործում այդ բառը: Միևնույն ժամանակ դուք ճիշտ եք՝ ասելով, որ դա ամբողջովին հնարք չէր: Սակայն նա չգիտի ինքն իրեն և այն, թե ինչպես է դա իր մոտ

ստացվում: Եթե դուք նրան կաշառեիրք և ստիպեիրք ասել այն, ինչ գիտի, ապա նա միգուցե ասեր ձեզ, որ գիտի *ինչ-որ մի բան*, որը նա պիտի մտքի մեջ կրկնի, որից հետո կկարողանա պատկել մեխերի վրա: Հնարավոր է՝ նա նույնիսկ իրեն թույլ տար ասել ձեզ այդ բառը: Բայց դա որևէ կերպ ձեզ չէր օգնի, քանի որ դա կլիներ միանգամայն հասարակ մի բան, որը որևէ ազդեցություն չէր ունենա ձեզ վրա: Այս մարդն ինչ-որ դպրոցի ներկայացուցիչ է, սակայն՝ ոչ աշակերտ: *Նա փորձարկման առարկա է:* Նրանք պարզապես նրա հետ և նրա միջոցով փորձեր են կատարել: Ակնհայտ է, որ նրան շատ անգամ հիպնոզացրել են, իսկ հիպնոզի տակ նրա մաշկը սկզբում անզգայացվել է, այնուհետև՝ սովորել դիմակայել ծակծկոցներին: Որոշ դեպքերում նման բան նույնիսկ հնարավոր է սովորական եվրոպական հիպնոսի ժամանակ:

Այնուհետև մաշկի անզգայությունը և աններթափանցելիությունը մշտական են դարձնում՝ հետհիպնոսային ներշնչանքի միջոցով: Դուք երևի գիտեք, թե հետհիպնոսային ներշնչանքը ինչ է: Մարդուն քնեցնում են և ասում, որ արթնանալուց հինգ ժամ հետո, նա որոշակի գործողություն պետք է կատարի: Կամ նրան հրամայում են ինչ-որ բան արտասանել, և հենց որ նա անում է դա, զգում է ծարավ, կարծում է մահացած է կամ նման մի բան: Այնուհետև նրան արթնացնում են: Երբ գալիս է ժամանակը, նա անդիմադրելի ցանկություն է զգում անել այն, ինչ իրեն ասվել է, կամ էլ, եթե նա հիշում է նրան ասված բառը, ապա այդ բառը արտասանելիս՝ անմիջապես տրանսի մեջ է ընկնում: Ձեր «Ֆաքիրի» հետ նման մի բան է կատարվել: Նրանք հիպնոսի տակ սովորացրել են նրան պատկել մեխերի վրա. այնուհետև, նրան արթնացնելով, ասել են, որ եթե արտասանի որոշակի բան, ապա կրկին կկարողանա մեխերի վրա պատկել: Այս բառը նրան հիպնոսային վիճակի մեջ է զգում: Հենց դա է պատճառը, որ նա այդքան քնկոտ և անտարբեր տեսք է ունեցել: Նման դեպքերում դա հաճախ է պատահում: Միգուցե նրանք երկար տարիներ աշխատել են նրա վրա, իսկ այնուհետև արձակել՝ թույլ տալով ապրել այնպես, ինչպես կցանկանա:

Այսպիսով՝ նա երկաթե մահճակալ է սարքել իր համար և դրա օգնությամբ շաբաթը մի քանի բուփի է վաստակում: Հնդկաստանում շատ են նման մարդիկ: Դպրոցները նրանց ընդունում են՝ փորձարկումներ կատարելու նպատակով: Սովորաբար նրանց գնում են երեխա ժամանակ, իսկ ծնողները մեծ ուրախությամբ վաճառում են իրենց երեխաներին, քանի որ հետագայում իրենք նույնպես շահ են հետապնդում: Բայց մարդն ինքը իհարկե չգիտի և չի հասկանում, թե ինչ է անում և, թե ինչպես է անում»:

Այս բացատրությունը ինձ շատ հետքքրեց, քանի որ նման բացատրությունն ես երբևէ ո՛չ լսել էի, ո՛չ էլ կարդացել: «Ֆաքիրների» հրաշագործությունները բացատրելու բոլոր փորձերը, որոնց ես հանդիպել էի, անկախ նրանից «հրաշագործությունները» հնարքներ կհամարվեին, թե մի ուրիշ բան, միշտ ենթադրվում էր, որ կատարողը գիտի ինչ է անում և ինչպես է անում, և եթե չի խոսում դրա մասին, ապա այն պատճառով, որ չի ցանկանում կամ էլ վախենում է: Այս դեպքում դիրքորոշումը լրիվ այլ էր: Գ.-ի բացատրություններն ինձ ոչ միայն հավանական էին թվում, այլ, կհամարձակվեմ ասել, միակ հնարավորը: Ինքը ֆաքիրը չգիտեր, թե ինչպես էր իրագործում իր «հրաշագործությունը» և իհարկե չէր էլ կարող բացատրել այն:

Մեկ այլ առիթով խոսում էինք Յեյլոնի բուդդայականությունից: Ես կարծիք հայտնեցի, որ բուդդայականները պետք է որ տիրապետեն հրաշագործության ուժին, որի գոյության մասին նրանք չեն գիտակցում և, որի հնարավորությունը մերժվում է պաշտոնական բուդդայականության կողմից: Այս նկատառումներից անկախ՝ նկարներս Գ.-ին ցույց տալու ժամանակ, ես պատմում էի Կոլումբոյում մասնավոր տանը գտնվող մի փոքր սրբավայրից մասին, որտեղ սովորականի պես կար Բուդդայի արձան, իսկ նրա ոտքերի մոտ՝ մի փոքր, զանգակաձև փղոսկրյա դագոբա, այսինքն՝ դագոբայի փորագրված փոքր կրկնօրինակ, որը դատարկ էր: Նրանք իմ ներկայությամբ բացեցին այն և ցույց տվեցին ներսում գտնվող ինչ-որ բան,

որը սուրբ մատունք էր համարվում: Այն մեծ փամփուշտի չափ կլոր գնդիկ էր, որն, իմ կարծիքով, փղոսկրից էր կամ սաղափից:

Գ.-ն ինձ ուշադիր լսում էր:

p.63

-Նրանք չբացատրեցին քեզ, թե ի՞նչ էր նշանակում այդ գնդիկը, - հարցրեց նա:

-Նրանք ասեցին ինձ, որ դա Բուդդայի աշակերտներից մեկի ոսկորի կտոր էր, որ այն հնություն էր և սրբություն:

-Դա այդպես է, բայց միևնույն ժամանակ այդպես չէ: Այն մարդը, որ ձեզ դա ցույց տվեց, կամ չգիտեր, կամ չէր ցանկանում ասել: Դա պարզապես ոսկորի կտոր չէր, այլ յուրահատուկ ոսկրե գոյացում, որը որոշ մարդիկ ձեռք են բերում վզնոցի պես վզի շուրջ՝ հատուկ վարժությունների արդյունքում: Լսե՞լ եք «Բուդդայի վզնոց» արտահայտությունը»:

-Այո, լսել եմ, - ասեցի ես, - սակայն այն ունի լրիվ այլ իմաստ: Բուդդայի վերամարմնավորման շղթան են անվանում «Բուդդայի վզնոց»:

-Այո, - ասեց Գ.-ն, - դա արտահայտության իմաստներից մեկն է, սակայն ես մեկ այլ իմաստի մասին եմ խոսում: Ոսկորների շղթան, որ մաշկի տակից զարդարում է վիզը, անմիջականորեն կապված է նրա հետ, ինչ կոչվում է «աստեղային մարմին»: «Աստեղային մարմինը», այսպես ասած, կապված է դրան, ավելի ստույգ՝ այս «վզնոցը» կապում է ֆիզիկական մարմինը աստեղայինի հետ: Այսպիսով, եթե «աստեղային մարմինը» շարունակում է ֆիզիկական մահից հետո ապրել, այն մարդը, որ ունի այդ «վզնոցից» մի ոսկոր, միշտ կարող է հաղորդակցվել տվյալ մահացած մարդու «աստեղային մարմնի» հետ: Սա հրաշագործություն է: Սակայն նրանք երբեք բացեիքաց չեն խոսում այդ մասին: Դուք ճիշտ եք, երբ ասում եք, որ նրանք ունեն հրաշալիքի ուժը, և սա հենց դրա օրինակն է: Սակայն, իհարկե, դրանից չի հետևում, որ ձեր տեսած ոսկորը իրական էր: Դուք այդ

ուսկորներից կգտնեք գրեթե ցանկացած տանը: Ես ձեզ պատմեցի այս ավանդույթի հիմքում ընկած համոզմունքի մասին»:

Եվ կրկին ես պետք է խոստովանեի, որ երբևիցե նման բացատրություն չէի լասել:

Գ.-ն մի փոքր գծապատկեր նկարեց ինձ համար՝ ցույց տալով, թե ինչպես են դասավորված փոքրիկ ոսկորները վզի մաշկի տակ. դրանք սկսվում էին ականջների մի փոքր առջևից և կիսաշրջանակներով տարածվում դեպի ծոծրակը:

Գծապատկերը անմիջապես հիշեցրեց ինձ սովորական ավշային գեղձերի սխեմատիկ պատկերը, որ կարելի է տեսնել անատոմիական ատլասներում: Սակայն ավելին ես չկարողացա իմանալ դրա մասին: